**Արձանագրություն N 3**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/12-01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«03» հոկտեմբերի 2016թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նիստը նախագահող՝*

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Աղավնի Բուդուլյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

Համաձայն ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 29-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Սարգիս Արմենակյանը:

**1. Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

Գնումը իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

**2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«ԿԼԻՄԱ ԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ-ի, «ՓՐԻԹԻ ՈՒԵՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

3.1 «ԿԼԻՄԱ ԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց «ԿԼԻՄԱ ԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

3.2 «ՓՐԻԹԻ ՈՒԽՑ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան. «ՓՐԻԹԻ ՈՒԽՑ» ՍՊԸ-ի հայտը ներկայացված է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 35-րդ կետի 9-րդ ենթակետով (հրավերի 1-ին մասի 7.9 կետ) սահմանված է, որ <<Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով>>:

Հաշվի առնելով, որ «ՓՐԻԹԻ ՈՒԽՑ» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած <<Ընթացակարգին մասնակցելու դիմում>>-ում (Հավելված 1) հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, ուստի պետք է փաստաթղթերը հաստատված լինեին էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հանձնաժողովը որոշեց «ՓՐԻԹԻ ՈՒԽՑ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետը, 44-րդ կետի 4-րդ ենթակետը և 45-րդ կետը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**4. Մասնակիցների առաջարկած գները՝**

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «ԿԼԻՄԱ ԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ | | | «ՓՐԻԹԻ ՈՒԽՑ» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Օդորակիչներ | 4 766 667 | 953 333 | 5 720 000 | 2 500 000 | 500 000 | 3 000 000 |

**5. Տեղեկատվություն՝ մասնակցի հետ բանակցություններ վարելու մասին.**

Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հրավերի պահանջներին համապատասխան գնահատված հայտ ներկայացրած միակ մասնակցի՝ «ԿԼԻՄԱ ԿՈՆՏՐՈԼ» ՍՊԸ-ի հետ վարել առաջարկված գնի նվազեցման շուրջ բանակցություններ:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

***Հանձնաժողովը որոշեց.***

-նիստը կասեցնել, և բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2016թ. հոկտեմբերի 07-ին, ժամը 11:00-ին՝ <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի վարչական շենքում (Վ. Սարգսյան 5):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նիստը նախագահող՝ Սարգիս Արմենակյան

Անդամներ՝ Կարեն Մելքոնյան

Էդգար Տոնականյան

Աղավնի Բուդոյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան